

ԵՐՈՐՈՇ ԵՎ ԶՈՐՈՐՈՇ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

Վեցերորդ հաղորդում

**Տիրոջ հետ առաջ շարժվել խորանի եկեղեցական կյանքից
դեպի տաճարի եկեղեցական կյանքը՝ Քրիստոսի Մարմինը՝
որպես կենդանի Աստծու տաճարը, կառուցելու համար**

Գրվածքների ընթերցում. Մտք 12:3-4, 42, Հվի 14:21, 23, Հոմ 8:28-29, Սղմ 27:4,
36:8-9, 43:4, 84:4-5

I. Մեր ներսում եղող Տերը ճգնում է առաջ գնալու շնչի անապատում եղող խորանի եկեղեցական կյանքից դեպի մեր հոգում եղող տաճարի եկեղեցական կյանքը Քրիստոսով՝ համարովանդակ Հոգով՝ որպես բարի երկրի իրականությամբ՝ Եբր 6:1ա, Հս 3:14-17, Երկ Օր 8:8, Եփս 2:21-22, Կղս 1:12, 2:6-7:

II. Խորանը և տաճարը եկեղեցու երկու տեսանկյունների նախատիպերն են.

Ա. Գ. Թզ 8:1-11-րդ խոսքերը ցույց են տալիս, որ խորանը միաձուլվեց տաճարի հետ. խորանը անապատով շարժվող շարժական նախակարապետն էր, մինչդեռ տաճարը Աստծու կառույցի ավարտունությունն էր ըստ նախատիպի:

Բ. Տաճարը՝ որպես խորանի ընդլայնում, խորիրդապատկերում է եկեղեցու ուժեղացումն ու կայունացումը, իսկ տաճարի կահավորանքի նորոգումն ու ընդլայնումը խորիրդապատկերում են սրբերի՝ Քրիստոսին ապրելու փորձառության նորոգումն ու ընդլայնումը. տաճարի և տաճարում եղող Սրբությունների Սրբության չափերը խորանի չափերի կրկնապատիկն են. ավելին՝ բացառությամբ Տապանակի՝ կահավորանքի և պարագաների չափն ու քանակը մեծապես ընդլայնվել էին Նրա ընդլայնված արտահայտության համար՝ 6:2, 20, Բ Մնց 4:1-8, հմմտ Ելց 26:3, 16, 18, 22-24, 33:

Գ. Խորանը երկրի վրա Աստծու եկեղեցու, կամ տեղանքներում եղող Նրա եկեղեցու նախատիպն է, մինչդեռ տաճարը խորիրդապատկերում է եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմնի իրականությունը. տեղական եկեղեցիները բանկագին միջոց են, որոնք մեզ բերում են Մարմնի՝ որպես Աստծու տնտեսության փառավոր նպատակի իրականության մեջ՝ Եփս 1:22-23, հմմտ Հյտ 21:10-11:

Դ. Եզակի սպասավորությունն Աստծու եզակի վկայության համար է, իսկ Աստծու եզակի վկայությունը՝ Քրիստոսի Մարմնի իրականությունը, իրական է դարձվում տեղական եկեղեցիներում՝ Ելց 25:22, 38:21, Հյտ 1:2, 9, հմմտ Եփս 4:4, Հվի 16:13:

Ե. Ա Կրթ 12-րդ գլխում նկարագրված Մարմինն այն վկայությունն է, որ տեղական եկեղեցին պետք է ունենա. այն Մարմնի վկայությունն է. տեղական եկեղեցին այսօր պետք է լինի վկայություն, որն արտահայտում է Քրիստոսի Մարմնի իրականությունը՝ խիս. 14-18, 20:

Զ. Եկեղեցին գոյություն ունի միասնության վկայության համար. երբ ասում ենք «տեղական եկեղեցի», շեշտադրում ենք ոչ թե «տեղական», այլ

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

«Եկեղեցի» բառը. կյանքը, որ եկեղեցին ունի, միասնության կյանք է՝ Հվի 17:11, 21, 23, Հյտ 1:10-12:

- Ե. Քրիստոսի Մարմնի իրականության վկայությունը Աստծու վերջնական վերականգնումն է՝ Աստծու հավիտենական տնտեսության վերականգնումը, որում Քրիստոսն ամեն ինչ է մեզ համար, որում կա Քրիստոսի Մարմնի միասնությունը և որում գործառում են Նրա Մարմնի բոլոր անդամները՝ Ա Տմբ 1:3-6, 6:3-5, Երբ 13:9, Եփս 1:17, 3:2, 8-11, 16-21, 4:1-6, 16:

III. Հովհաննեսի Ավետարանը Քրիստոսի՝ որպես եկեղեցու՝ կենդանի Աստծու տաճարի կառուցման համար եղող կյանքի ավետարանն է. կառուցման այս աշխատանքն իրականացվում է խաչված ու հարուցանված Քրիստոսին՝ որպես կյանքի ծառի, մեր փորձառաբար ապրելու ու վայելելու միջոցով՝ Հյտ 2:4-7, Ա Պտտ 2:24, Հվի 11:25, 6:57, 63, Բ Կրթ 6:16.

- Ա. Կյանքի սկզբունքը մահը կյանքի վերածելն է (Հվի 2:1-11), իսկ կյանքի նպատակը եկեղեցին՝ որպես Աստծու տունը, տաճարը, կառուցելն է (իսխ. 12-22). ուստի Տերն ազդարաբեց. «Քանդեցեք այս տաճարը, և Ես երեք օրում այն կրաքարացնեմ» (իս. 19):
- Բ. Իր մահվան, այսինքն՝ խաչի վրա Իր ֆիզիկական մարմնի ավերման միջոցով Նա կրեց մեր հանցանքներն ու անօրենությունները, որպեսզի փրկազնի ու արդարացնի մեզ, և Նրա մահն իրագործվեց մեր ախտերը բուժելու համար՝ Եայ 53:4-6, Հոմ 3:23-26, Ա Պտտ 2:24:
- Գ. Տիրոց ֆիզիկական մարմնի ավերումը նաև բանսարկուի ավերումն էր՝ մահվան զրությունն ունեցողի. Երբ Նա մեռավ խաչի վրա, իին ստեղծագործությունը, իին մարդը, մսեղին, Սատանան, մեղքը, մեղքերը և աշխարհը խաչվեցին դրա վրա. այսպիսով՝ Աստծու աչքին Քրիստոսի խաչելությունից հետո ամբողջ տիեզերքը մաքրվեց՝ Երբ 2:14, Հոմ 6:6, Գյտ 2:20, 5:24, Հվի 1:29, 3:14, 6:70-71, 12:31, Մտք 16:23, Ա Կրթ 15:3:
- Դ. Տիրոց ֆիզիկական մարմնի ավերումը և երեք օր անց Նրա հարուցանվելը նաև Նրա մեռնելն էր որպես ցորենի հատիկ ու հարուցանվելը՝ Աստծու աստվածային կյանքը՝ որպես Աստծու աստվածային կրակ, ազատագրելու և Նրա բազում հավատացյալներին բաշխելու համար, որպեսզի Իր բազում հավատացյալներին դարձնի Աստծու վերարտադրությունը՝ Հվի 12:24, Ղկս 12:49-51:
- Ե. Քրիստոսի մահվան ու հարության շնորհիվ Նրա ֆիզիկական մարմինը մեծացավ՝ դառնալով Նրա լոնդիանիրական ու առեղծվածային Մարմինը՝ Աստծու տիեզերական տաճարը, եկեղեցին՝ որպես կենդանի Աստծու տունը՝ Ա Կրթ 3:16-17, Ա Տմբ 3:15, Ա Պտտ 2:5, Եփս 2:21-22:
- Զ. Բազում կացարանները Քրիստոսի Մարմնի, որն Աստծու տաճարն է, բազում անդամներն են՝ Հվի 14:2, 23, Հոմ 12:5, Ա Կրթ 3:16-17:
- Է. Որպես բազում հատիկներ, որոնք առաջացվել են Քրիստոսի՝ կյանք ազատագրող մահվամբ, ու Քրիստոսի առեղծվածային Մարմնի բազում կացարաններ, որոնք առաջացվել են Քրիստոսի՝ կյանք ազատագրող

ԵՐՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՅՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

հարությամբ, մենք պետք է լինենք մարդիկ, որոնք ծայրաստիճան սիրում են Նրան՝ խաչյալ կյանքով ապրելով, որպեսզի հարության կյանքը հայտնի արվի մեր հողե անորներում եղող գանձի զորությամբ՝ Հվի 14:21, 23, Հոմ 8:28-29, Բ Կրթ 4:7-18, 12:7-9:

IV. Դավիթի ու Սողոմոնի Քրիստոսի նախատիպերն են Աստծու կառուցի համար եղող երկու տեսանկյունով.

- Ա. Դավիթը Քրիստոսի նախատիպն է Նրա մարմնացումից՝ Նրա Աստվածամարդկային ապրելակերպով ու չարչարանքներով հանդերձ, մինչև Նրա մահը (մատրից մինչև խաչը)՝ Մտք 12:3-4, 22:41-46:
- Բ. Սողոմոնի Քրիստոսի նախատիպն է Նրա հարության մեջ փառքում՝ որպես մեր մեջ եղող կենդանարար Հոգու (ներառյալ Նրա գահակալումն ու Նրա երկրորդ գալուատը՝ երկրի վրա Իր թագավորության վրա իշխելու նպատակով), ով խոսում է Աստծու իմաստության խոսքը, որպեսզի կառուցի եկեղեցին՝ որպես Աստծու տաճարը՝ 12:42, Բ Մոն 1:10, Ա Կրթ 1:24, 30, 12:8:
- Գ. Աստված «վկայեց ու ասաց. Գտա Դավիթն՝ Հեսսեի որդուն, Իմ սրտի համաձայն մի մարդու, ով կատարելու է Իմ ողջ կամքը» (Գրծ 13:22). Դավիթն «իր իսկ սերնդին Աստծու որոշմամբ ծառայեց» (Խ. 36). Նա Աստծու սրտի համաձայն մարդ էր (Ա Թգ 13:14), որովհետև ըստ Սողոմոնի վկայության. «Դավիթ՝ իմ հոր սրտում կար Եհովայի՝ Իսրայելի Աստծու անվան համար տուն կառուցելը» (Գ Թգ 8:17-20, հմմտ Եփս 1:5, 9, Ա Կրթ 12:12-27. տես 13-րդ խոսքի ծրգ 2):
- Դ. Դավիթը չարչարվում էր իր պատանեկությունից, այդուհանդերձ իր չարչարանքների միջոցով նա պատրաստեց նյութերը, պատշաճ տեղ ձեռք բերեց տաճարի կառուցման համար և պատրաստեց Սողոմոնին՝ կառուցողին, ու բոլոր օգնականներին՝ Ա Մոն 21:18-30, Բ Մոն 3:1, Ա Մոն 28:9-11, 20-21:
- Ե. Այն, որ Դավիթն առատությամբ պատրաստեց նյութերը Աստծու տաճարի կառուցման համար, այն բանի նախատիպն է, որ Քրիստոսն Իր անքննելի հարստությունը տրամադրում է Աստծու եկեղեցին կառուցելու համար՝ 18:7-11, 22:2-5, 14-16ա, 28:2, 29:2-9, հմմտ Եփս 3:8-10:
- Զ. Դավիթի նախապատրաստելու իր ներության (Ա Մոն 22:1, 14), իր փորձությունների և իր պատերազմներում տարած հաղթանակների մեջ Աստծու եկեղեցին կառուցելու համար անհրաժեշտ հարուստ ապահովման նախատիպն է, որ Քրիստոսը տրամադրեց Իր փորձությունների և խավարի իշխանությամբ հանդերձ Սատանայի դեմ պատերազմելու Իր կյանքում տարած Իր հաղթանակի մեջ (Մտք 4:4, 7, 10):
- Է. Դավիթին տված տաճարի նմուշը «այն բոլոր բաների նմուշն էր, որ նա ուներ Հոգու միջոցով» (Ա Մոն 28:12). «այս ամենը, ասաց Դավիթը, Նա հստակորեն հասկացրեց Եհովայի ձեռքի գրով ինձ վրա, այս նմուշի բոլոր մանրամասները» (Խ. 19, հմմտ Բ Կրթ 3:3). Սողոմոնի կառուցած տաճարը համապատասխանում էր այս նմուշին (Ա Մոն 28:11):
- Ը. Այն, որ Դավիթն Իսրայելի՝ Աստծուն ուղղված ծառայությունների կարգ

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

հաստատեց, ծառայություններ, որ կապված էին Աստծու տաճարի հետ (6:31-48, գգ. 23-26), այն բանի նախատիպն է, որ Հոգին Նոր Կտակարանում եկեղեցու ծառայությունների կարգ է հաստատում (Ա Կրթ 12:4-27), ինչպես նաև այն բանի նախատիպը, որ Քրիստոս՝ որպես Մարմնի Գլուխ, Իր Մարմնում կարգ է դրել, որը Նրա բոլոր անդամները պետք է պահեն (յս. 18, 14:40):

- Ժ. Եկեղեցու նախագիծը հարության Հոգին է՝ համարովանդակ, կենդանարար, բաղադրյալ ներքնակվող Հոգին. Երբ մեր հոգում ապրում ենք հարության Հոգում, մեր ներսում իրականացվում է ըստ Դավթի նախագծի Սոլոմոնի կողմից տաճարի կառուցման իրականությունը (Քրիստոսի աստվածամարդկային ապրելակերպի, մահվան ու հարության բոլոր բաղադրիչներով հանդերձ)` Հվի 2:19, Փլա 1:19, Եփս 1:17, 2:22, 3:5, 16, 4:23, 5:18, 6:18:
- Ժ. «Սոլոմոն» անունը նշանակում է «խաղաղություն», ինչից հետևում է, որ Եկեղեցին կառուցվում է Քրիստոսի՝ որպես «հանգստի մարդու» կողմից խաղաղության իրավիճակում՝ առանց որևէ «աղմուկի»՝ Ա Մնց 22:9, Գրծ 9:31, Եփս 4:29-32.
1. Տաճարի կառուցման համար օգտագործված ամեն քար, որպես կանոն, արդեն տաշված ու մշակված էր լեռներում. ուստի մուրճի, կացնի և երկարե զործիքի ձայն չէր լսվում, և տաճարը կառուցվում էր լուսության մեջ՝ Գ Թգ 5:15-18, 6:7:
 2. Եթե որևէ եղբայր, որը չի ենթարկվել Տիրոջ ներգործությանը (որը շաղակարաս է, անընդունակ է լսելու ու այդպիսով չնորոգված միտք ունի) երեց դառնա, Եկեղեցին կլցվի «մուրճի», «կացնի» և «երկարե զործիքի» աղմուկով. որոշ «աղմուկ» կարող են լինել այն սրբերը, որոնք պայքարում են իրար դեմ՝ աղոթելով այնպես, որ չեզոքացնեն մյուսի աղոթքները՝ հմմտ Եսյ 50:4-5, Եփս 4:23:
 3. Եկեղեցում եթե լսենք ուրիշների քննադատությունը, դատելը, վիճելն ու հակառակությունը, պետք է քաշվենք Սրբությունների Սրբություն, այսինքն՝ հեռանանք մեր հոգու մեջ և շրջվենք մեր հոգուն. տաճարը կառուցվում է լուսության մեջ՝ Գլու 6:17-18, Եսյ 30:15ա:
 4. Այն բանից հետո, երբ Տապանակը հանգստի մեջ մտավ, նրանք, ում Դավիթը կարգել էր Եհովայի տանը երգի ծառայության վրա, երգելով սպասավորում էին Ծողովքի Վրանի առջև, մինչև որ Սոլոմոնը կառուցեց Եհովայի տունը Երուսաղեմում՝ Ա Մնց 6:31-3:
- ԺԱ. Մենք բնակվում ենք «Իր [Արքայի] հետ.... Իր զործի համար»՝ վայելելով Նրան՝ որպես խաչված ու հարուցանված Քրիստոսի, ով Իրեն ներկառուցում է մեր մեջ, որպեսզի կատարելագործվենք ու Եկեղեցու՝ որպես Աստծու տաճ այուներ դառնանք՝ 649-րդ օրիներգ, Ա Մնց 4:23, Գ Թգ 7:17, 21, Հյտ 3:12:
- ԺԲ. Վայելելով համարովանդակ Քրիստոսին՝ որպես հարության զորության և պատրաստված Եռամեկ Աստծու հարուցանող ու կենդանարարող Հո-

ԵՐՈՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՈՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

գու (իրական ու մեծ Սողոմոն), մենք կարող ենք մասնակցել Քրիստոսի չարչարանքների հաղորդակցությանը՝ Նրա՝ որպես աղոքքի մարդու աստվածամարդկային ապրելակերպով հանդերձ, որպեսզի կերպարանակցվենք Նրա մահվանը (իրական ու մեծ ‘Դավիթ’ հանուն Նրա Մարմնի (իրական ու մեծ տաճար)՝ Փլա 3:10, Հոմ 8:11, Մտք 12:3-4, 42, Հվի 2:19-22, Բ Կրք 6:16:

V. Աստծու՝ եկեղեցին՝ որպես կենդանի Աստծու տաճարը, կառուցելու մտքերն ու ճանապարհները մերից ավելի բարձր են. մենք պետք է քողնենք մեր ճանապարհներն ու մեր մտքերը և վերադառնանք Եհովային՝ մեր Աստծուն, որպեսզի ընթանանք եկեղեցում՝ որպես կենդանի Աստծու տաճարում, Նրան վայելելու ճանապարհով՝ Ծնդ 2:9, Հվի 6:35, 57, 63, Եսյ 55:6-13, 57:20, Հվի 1:14, 2:19, 3:34, 17:17, Եփս 5:26, Բ Կրք 3:15-18, 6:16, Հոմ 8:28-29, Հյտ 22:1-2.

Ա. Որպես Աստծու զավակներ՝ մենք պետք է փոխենք մեր պատկերացումները և գիտակցենք, որ Աստծու ցանկությունն Իրեն մեզ տալն է մեր վայելքի համար՝ Սղմ 36:8-9, 16:11, 19:8, 27:6, 42:4-5, 48:2, 63:7, 66:1-2, 81:1, 89:15-18, 95:1-2, 100:1-2, 126:1-6, Նեմ 8:10, Ա Հվի 1:3-4.

1. Պտղաբերելն Աստծուն վայելելն է՝ Հվի 15:7-11:

2. Աղոքքն Աստծուն վայելելն է՝ Ողբ 3:55-56, 194-րդ օրիներգ:

3. Խոսքը սպասավորելն Աստծուն վայելելն է՝ Հվի 6:57, 63, 7:37-39, Ա Կրք 15:10, Բ Կրք 3:1-6, 18, 2:17, 13:3, Եփս 3:2, Ա Պտ 4:10-11, Երմ 15:16, Եզկ 3:1-4, Եսյ 55:8-11:

4. Ավետարանելն Աստծուն վայելելն է՝ Հվի 4:10, 13-14, 31-34:

5. Աստծու առաջնորդություն ստանալն Աստծուն վայելելն է՝ Ելց 33:14:

Բ. Քրիստոնեական կյանքով ապրելու գաղտնիքը, որպեսզի հաղթողներ լինենք, ընթանալն է Աստծուն՝ որպես կյանքի ծառի, վայելելու ճանապարհով. Աստված չի ուզում, որ մենք Իր համար ինչ-որ բան անենք. Նրա միակ ցանկությունը Իրեն մեզ տալն է որպես կերակրի մեր վայելքի համար՝ Ծնդ 2:9, Հյտ 2:7:

Գ. Մենք ճաշակում ու տեսնում ենք, որ Եհովան բարի է (Սղմ 34:8) Աստծու տանը՝ Աստծու տաճարում, այսինքն՝ Քրիստոսի մեջ (Հվի 2:19-22), եկեղեցում (Ա Տմբ 3:15, Ա Կրք 3:16-17, Բ Կրք 6:16), մեր հոգում (Եփս 2:22) և վերջապես Նոր Երուսաղեմում (Հյտ 21:22):

Դ. Մենք պետք է սիրենք Աստծու բնակության կացարանը՝ տաճարը, և այն վայրը, որտեղ դրսերվելու համար հարակայում է, մնում է Նրա փառքը՝ Սղմ 26:8, 84:1, 29:9ը, Եփս 3:20-21ա:

Ե. «Մեկ բան եմ խնդրել Եհովայից. սա եմ փնտրում, որ Եհովայի տան մեջ բնակվեմ իմ կյանքի բղոք օրերը՝ Եհովայի գեղեցկությանը նայելու և Նրա տաճարում հարցնելու համար» (Սղմ 27:4). Եհովայի տունը ընդլայնված, տիեզերական աստվածամարդկային ընդհանրականություն է Հոր դրսերման, բավարարության ու հանգստի համար (Հվի 14:2, 20, 23):

Զ. Քրիստոսի մեջ, եկեղեցում և հոգում մենք վայելում ենք «որոշակի տե-

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

դակայում ունեցող Աստծուն»՝ որպես Իր տան պարարտության, որը հազեցնում է մեզ, որպես Իր հաճությունների գետի՝ մեր ծարավը հազեցնելու համար, և որպես կյանքի ու լույսի աղբյուրի՝ մեզ կերակրելու և մեզ լուսավորելու համար՝ Սղմ 36:8-9:

- Ե. «Կզմամ Աստծու զրիասեղանի մոտ, Աստծու մոտ՝ իմ մեծագույն ուրախության. և Քեզ տավիղով եմ գովարանելու, ո՞վ Աստված, իմ Աստված»՝ 43:4:
- Ը. Աստծու տանը՝ Աստծու տաճարում, մենք վայելում ենք Աստծու երեսի՝ Աստծու ներկայության փրկությունը (42:5), որպեսզի Նա լինի մեր երեսի փրկությունը (իս. 11):

VI. «Երանելի են նրանք, որ Քո տան մեջ են բնակվում. նրանք դեռ Քեզ են գովերգելու: Սելա՛: Երանելի է այն մարդը, ում զորությունը Քո մեջ է, ում սրտի մեջ Սիոնի ճանապարհներն են»՝ 84:4-5.

- Ա. «Գովելու եմ Քո անունը հավիտյան հավիտենից»՝ 145:2թ:
- Բ. «Եհովային եմ գովելու. սաղմոս եմ երգելու իմ Աստծուն, քանի դեռ գոյություն ունեմ»՝ 146:2:
- Գ. «Դու սուրբ ես, Դո՛, որ նստած ես Խորայելի գովքերի՝ իբրև գահի վրա»՝ 22:3:
- Դ. «Նրա միջոցով Աստծուն շարունակաբար գովության զոհ մատուցենք, այսինքն՝ Նրա անունը դավանող շուրբերի պատուղը»՝ Եբր 13:15, Փլա 2:11: